ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ-ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ 1926-1937 ԹԹ. *

Վանիկ Վիրաբյան

Բանալի բառեր՝ *Վրացական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ, Լոռի, Ախալքալաք, Բորչալու, սահմանազատում, հողահանդակ, հողային-տարածքային վեճեր, սահմանագիծ, պայմանագիր:*

1925-1926 թթ. սահմանագծին հայ-վրացական հարաբերությունները թևակոխեցին հանգուցալուծման նոր դժվարին փուլ: 1926 թ. հունվարի 8-ին Կենտգործկոմին ուղղված գրությունում ՀՀ հողժողկոմը, արձանագրելով այն փաստը, թե իբր 1921 թ. նոյեմբերի 6-ի ակտով լուծված էր համարվում Վրաստանի և Հայաստանի սահմանային խնդիրը, որ 1922 թ. սեպտեմբերին երկու հանրապետությունների հողժողկոմատների փոխադարձ համաձայնությամբ վիճելի տարածաշրջանը փաստորեն անցել էր Հայաստանին, նշում էր, որ, այդուհանդերձ, Վրաստանի հողժողկոմատը այնուհետև հիշյալ սահմանն անբնական է համարել՝ ներկայացնելով սահմանային հարցի լուծման այլ նախագիծ՝ Լոք-Լալվարի ուղղությամբ: Ելնելով դրանից՝ ՀՀ հողժողկոմը, անընդունելի համարելով վերոնշյալ որոշումը, հարց է բարձրացնում Անդրկենտգործկոմի առջև՝ խնդրելով հաստատել 1921 թ. նոյեմբերի 6-ի համաձայնության պայմանները և հանձնարարել հողժողկոմատին տեղում ընդունելի համարել համապատասխան սահմանագիծը[1]:

1926 թ. ապրիլի 27-ին ՀԽՍՀ հողժողկոմ Արամայիս Երզնկյանը Անդրկենտգործկոմի հանձնաժողովին ներկայացրած պաշտոնագրում արձանագրում է այն փաստը, որ Փամբակ-Լոռու և Բորչալու գավառների վերջնական սահմանագծման հարցը հատուկ հանձնաժողովի կողմից տեղազննությունից հետո Սադախլոյում չլուծվեց միայն այն պատճառով, որ Վրաստանի հողժողկոմատի ներկայացուցիչները համաձայնություն կայացնելու առիթով վերջնական ցուցում չէին ստացել: Ըստ այդմ՝ Ա. Երզնկյանն իր վերընշյալ տեսակետը հիմնավորում էր հանձնաժողովի աշխատանքների արդյունքներով.

1) 1921 թ. նոյեմբերի 6-ի համաձայնությամբ ուղղումներով հանդերձ որոշված սահմանագիծը կարելի է անցկացնել վիճարկելի համարվող վայրում.

2) ապացուցված համարել, որ Վորոնցովկայի գավառակի բոլոր գյուղերը սուր կերպով են զգում շրջանի անտառի կարիքը, իսկ նրանց սահմանամերձ անտառից զրկելը անթույլատրելի գտնելով, փաստում էր, որ Ալավերդու պղնձահանքերը միշտ օգտվել են սահմանամերձ շրջանի անտառներից.

3) Երզնկյանը կարծում էր, որ 1921 թ. սահմանագիծը չէր կարող կյանքում կիրառվել այնպիսի ձևով, որ ոչ մի դժգոհություն առաջ չբերեր երկու կողմերի գյուղացիության կողմից.

4) արձանագրել, որ 1921 թ. սահմանագիծը չի շոշափել նաև Շարուրի գործարանի շահերը, որ Փամբակ-Լոռու գավառին միացված անտառաշրջանում գործարանը պետք է օգտվի մի տարածությունից, որը դյուրությամբ կարող են փոխանակել Բորչալու գավառի 60 հազար դեսյատին տարածքի՝ Պրպնջանի և Չանդարի միջև ընկած անտառների հետ:

---

* Հոդվածն ընդունվել է 10.09.19:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ ՀՊՄՀ պրոֆեսոր, պ.գ.դ. Ս. Պողոսյանը: 30.09.19:

Երզնկյանը նշել էր, որ այդ տարբերակի դեմ Վրաստանի Հողժողկոմատի ներկայացուցիչները ներկայացրել են անհեթեթ առարկություններ[2]: Նա ընդգծել էր, որ Անդրկենտգործկոմի, Վրաստանի Հողժողկոմատի ներկայացուցիչների միջոցով կատարած տեղազննումից հետո մերժվել է հայկական կողմի նախագիծը: Ելնելով այդ ամենից, Երզնկյանը գտնում էր, որ Վրաստանի հողժողկոմատը ևս պետք է հրաժարվի նախագծի իր տարբերակից՝ վերջնականապես հաստատելով 1921 թ. նոյեմբերի 6-ի սահմանագծումն այն փոփոխություններով, որ ընդունելի լինի կողմերի կողմից: Շրջանցելով իրենց ներկայացրած նախագիծը՝ նա հայտնում էր, որ այն կազմելու ժամանակ հաշվի են առնվել Անդրկենտգործկոմի և Վրաստանի Հողժողկոմատների հիմնական պահանջները՝ պնդելով, որ 1921 թ. համաձայնությունն անցնում է բնական անվիճելի գծերով և տարածքային ու անտառային ֆոնդի հարցում կողմերից ոչ մեկի համար աննպաստ դրություն չի ստեղծում[3]:

Սակայն 1926 թ. մայիսին կրկին անհրաժեշտություն առաջացավ ճշգրտել Անդրկենտգործկոմի Հողհանձնաժողովի կողմից այդ պահին որոշված սահմանը և այդ խնդիրը լուծելու համար Վրաստանի և Հայաստանի ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրվում է խորհրդակցություն, որում սակայն համաձայնություն ձեռք չի բերվում[4]: Խնդրահարույց հարցի լուծման համար հանրապետությունների հողժողկոմների ներկայացուցիչների մասնակցությամբ կատարվում է վիճելի տարածքների նոր հետազոտում՝ պարզելու նրանց տնտեսաքաղաքական հակվածության հիմքերը: Այդ խնդրի իրագործման նպատակով Ստուրուայի նախագահությամբ կազմվում է հանձնաժողով, որում ներգրավվում են նաև Վրաստանի և Հայաստանի հողժողկոմները, գավառային գործկոմների ներկայացուցիչները: Հայաստանի Կենտգործկոմի 1926 թ. նոյեմբերի 3-ի արձանագրությունից պարզվում է, որ ՀԽՍՀ ԿԳԿ-ի նիստը լսել է Վերին և Ներքին Քերպիլի գյուղերի բնակիչների միջնորդության հարցը՝ այդ գյուղերը Վրացական ԽՍՀ-ի կազմում ընդգրկելու մասին՝ հիմք ընդունելով Անդրկենտգործկոմի նախագահության ապրիլի 20-ի և Հողժողկոմատի հունիսի 7-ի որոշումները, որի մասին զեկուցումով հանդես է գալիս Հայաստանի ԿԳԿ-ի քարտուղար Ա. Տատյանը: ՀԽՍՀ Կենտգործկոմի նախագահ Ա. Կարինյանի և Տատյանի ստորագրությամբ ընդունված որոշման մեջ հայկական կողմը Անդրկենտգործկոմին խնդրում էր իրենց գյուղերը Վրացական ԽՍՀ կազմում ընդգրկելու մասին քերպիլինցիների միջնորդությունը մերժել և թողնել առանց հետևանքի՝ պնդելով, որ նրանց հայտարարությունը ծագել է հողային վեճերից, որոնք պետք է վճռեին ՀԽՍՀ իշխանությունները, և ըստ այդմ Հողժողկոմատին առաջարկում էր շտապ միջոցներ ձեռնարկել Վերին և Ներքին Քերպիլիների հետ հողային վեճերը կարգավորելու համար և այդ մասին զեկուցել ՀԽՍՀ Կենտգործկոմին[5]: Ակնհայտ է այստեղ ՀԽՍՀ իշխանությունների շահագրգռվածությունը հողային հարցերը հօգուտ Հայաստանի լուծման հարցում:

ՀԽՍՀ Կենտգործկոմի 1926 թ. դեկտեմբերի 29-ի նիստում տեղեկացվում է 1927 թ. հունվարի 2-ին Թիֆլիսում կայանալիք Անդրկենտգործկոմի հողհանձնաժողովի նիստի մասին՝ քննարկելու Շինիխ-Այրում, Լալվար, Գերաս-Չայ-Արաքս շրջանների միջև ծագած վեճերի, արոտավայրերի խնդիրը՝ կապված քոչվոր անասնապահության վերացման հեռանկարի հետ:

Տատյանի զեկուցման հիման վրա 1927 թ. հունվարի 2-ին որոշվում է 1927 թ. հունիսի 2-ին Թիֆլիսում կայանալիք հողհանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար գործուղել Հայկենտգործկոմից Ա. Երզնկյանին, Զանգեզուրի և Մեղրու գավգործկոմից՝ Ն. Ադոյանին և Լոռի-Փամբակի գավգործկոմից՝ Յու. Հովսեփյանին[6]: 1927 թ. հունիսի 6-ին Հայկենտգործկոմում արձանագրվում է, որ Աղքորփի, Չանախչի, Ձիլիգա և Բրդաձոր գյուղերն անտառային շրջանի հետ Վրաստանի հետ վիճարկելի չեն[7], իսկ հունիսի 8-ին նշվում է, որ բնակելի այլ վայրերի համար հարևան հանրապետությունների հետ ձևակերպված վեճ գոյություն չունի, որ Անդրկենտկործկոմը որո-

շում ունի, որ կողմերից նոր վեճերի հայտեր այլևս չի ընդունելու և քննության չի առնելու[8]:

1927 թ. հունիսի 20-ին Ս. Կասյանի և Ա. Գեգեչկորու համանախագահությամբ տեղի ունեցած Անդրկենտգործկոմի նախագահության նիստում քննարկվում է Անդրֆեդերացիայի հանրապետությունների միջև հողային-անտառային վեճերի լուծման հանձնաժողովի կանոնադրության նախագծի հարցը: Միաժամանակ Անդրհողժողկոմատին հանձնարարվում է կազմել ընդհանուր հեռանկարային պլան՝ ձմռանը և ամռանը ալպիական մարգագետինների արոտավայրերում կազմակերպվող քոչվոր և կիսաքոչվոր անասնապահությունից կուլտուրական հողագործությանը անցնելուն նախապատրաստվելու համար[9]:

1927 թ. սեպտեմբերի 19-ին Անդրկենտգործկոմի նախագահության նիստը Աղամալի-Օղլու նախագահությամբ լսում է Վրաստանի Բորչալուի և ՀԽՍՀ Լոռի-Փամբակի գավառների միջև ընկած Լոք-Լալվար վիճելի տարածաշրջանում վարչատնտեսական սահմանագծի հաստատման հարցը: Կայացված որոշման մեջ հաշվի առնելով Լոք--Լալվարի տարածաշրջանի իրական բնասահմանի հաստատման համար ստեղծված հանձնաժողովի նախագահի պարտականությունների կատարման անհնարինությունը՝ որոշվում է վերջինիս փոխարեն այդ պաշտոնում նշանակել Բաղիրովին՝ առաջարկելով առաջադրված խնդիրները լուծել մեկամսյա ժամկետում[10]: Ս. Կասյանի նախագահությամբ 1927 թ. դեկտեմբերի 5-ին հրավիրված Անդրկենտգործկոմի նիստում լսվում է նախագահության առաջարկը Լոք-Լալվար շրջանի շրջանակներում Բորչալու գավառի և ՀԽՍՀ Լոռի-Փամբակի գավառների վարչատնտեսական սահմանի հաստատման համար ստեղծված հանձնաժողովի աշխատանքների երկարաձգմանն առնչվող հարցը: Հաշվի առնելով աշխատանքների կատարման ծմռանը հողագծման անհնարինությունը՝ Անդրկենտգործկոմը որոշում է սահմանազատումն իրագործելու համար իր իսկ նախագահության՝ սեպտեմբերի 19-ի որոշմամբ ձևավորված հանձնաժողովին հանձնարարել այդ աշխատանքները կատարել 1928 թ. գարնանը[11]: 1927 թ. հուլիսի 16-ին վիճարկելի հարցերը կրկին քննարկվում են Անդրկենտգործկոմի նախագահության կողմից, սակայն կրկին ոչ արդյունավետ ելքով, առավել ևս որ Բաղիրովը ներկա չի գտնվում այդ նիստին: Նրան փոխարինում էր Յաղուբովը, որին առաջարկվում է Բորչալուի և Լոռի-Փամբակի միջև վիճարկելի վարչատնտեսական սահմանի հարցի լուծման ուղղությամբ տարվող աշխատանքներն ավարտին հասցնել մինչև հուլիսի վերջը[12]:

1927 թ. Անդրկենտգործկոմի նախագահության՝ ԽՍՀՄ Ազգությունների խորհրդին տված զեկուցման մեջ արձանագրվում է, որ 53 տեղամասերով ընդհանուր 76.635 դեսյատին մակերեսով վիճելի համարվող տարածքից Ադրբեջանին է անցել 8208 դեսյատին, Հայաստանի կազմում ընդգրկվել է 3990 դեսյատին, իսկ Վրաստանի՝ 64.437 դեսյատին հող[13]:

1928 թ. հունիսի 7-ին Անդրկենտգործկոմի Փոքր նախագահությունը Ս. Կասյանի նախագահությամբ լսում է Բորչալու և Լոռի-Փամբակ գավառների միջև վարչատնտեսական սահմանագծման անցկացման Բաղիրովի գլխավորությամբ գործած հոդհանձնաժողովի հաշվետվությունը: Ի լրացումն Անդրկենտգործկոմի 1927 թ. դեկտեմբերի 5-ի և 1927 թ. սեպտեմբերի 19-ի որոշումների՝ խնդիր է դրվում ձեռնամուխ լինել Բորչալու-Լոռի-Փամբակ սահմանագծի ճշգրտմանը և դրանք ավարտել հուլիսի վերջին[14]:

Հիմք ընդունելով Անդրկենտգործկոմի Փոքր նախագահության որոշումը՝ 1928 թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում Ս. Յաղուբովի գլխավորությամբ և Վրաստանի ու Հայաստանի հանրապետությունների հողժողկոմներ Ս. Զուղելու և Ա. Երզնկյանի մասնակցությամբ ձևավորվում է հանձնաժողով Բորչալու և Լոռի-Փամբակ գավառների միջև Լոք-Լալվարի տարածաշրջանային (Սադախլոյի անտառային ամառանոցավայր) վեճը

քննարկելու համար: Մտքերի փոխանակության արդյունքում հանձնաժողովը անհրաժեշտ և հնարավոր է գտնում նշված վեճը լուծել հետևյալ հիմքերով.

1) իրենց հողերով վիճելի հողաշերտին հարող գյուղերը (խոսքը 1921 թ. նոյեմբերի 6-ի որոշմամբ հաստատված գծի մասին է) այս կամ այն կողմին պետք է անցնեն իրենց բոլոր բաժնեհողերով.

2) բոլոր այն գյուղերը, որոնք կանցնեն այս կամ այն կողմին, ինչպես նաև նրանք, որոնք գտնվում էին կողմերի անվիճարկելի տարածքներում, պետք է իրավունք ունենան, ըստ մինչ այդ գոյություն ունեցող կարգի, հավասարապես օգտվելու Բորչալու և Լոռի-Փամբակ գավառների անտառներից.

3) Լոք-Լալվարի լեռնագոգի հյուսիսային լանջին գտնվող ամառային արոտավայրերից օգտվելը ամրագրել մինչ այդ դրանցից օգտվող Բորչալու գավառի անասնապահների օգտին.

4) Չաթախի չուգունաձուլական գործարանին ամրակցել 1923 թ. մայիսի 20-ին Վրաստանի Հողժողկոմատին հանձնված անտառային ամառանոցը, ՀԽՍՀ հողժողկոմատի տնօրինության տակ գտնվող անտառներից Վրաստանին տալ չորս հազար դեսյատին: Միաժամանակ հանձնաժողովը անհրաժեշտ է գտնում սահմանել վարչատնտեսական սահմանագծի ուղղվածությունը Բորչալուի և Լոռի-Փամբակի գավառների միջև Լոք-Լյալվարի շրջանում. այն ձգվում էր Դեբեդ-չայից, այնտեղից, որտեղ այդ գետին հարում էր Սադախլո գյուղի բաժնեհողերի հարավային սահմանագիծը՝ այն ընդհանուր ձգվածությամբ դեպի արևմուտք մինչև Կարմիր Քար բարձունքը, որից հետո Խոժոռնի և Գյոլբեկինսկի հողերով ձգվում սկզբում դեպի հարավ-արևմուտք, իսկ այնուհետև թեքվելով դեպի հյուսիս-արևմուտք՝ իջնում Բանիոշ գետը, այնտեղ կտրուկ շրջվում դեպի արևմուտք, վեր բարձրանում և իջնում հյուսիս-արևմտյան ուղղությամբ դեպի Շուլավեր-չայ գետը: Ինչպես նախատեսվում էր, այդ կետից դեպի վեր նշված գետի հոսանքով սահանագիծը հասնում էր մինչև Օփրեթի և Չանախչի գյուղերի վարձակալական հողերը՝ եկեղեցու ավերակի մոտ և այնտեղից նշված գյուղերի վարձակալական հողերի սահմաններով ձգվում մինչև Աղքյորփի-չայը, որտեղից հարավարևմտյան ուղղությամբ սահմանագիծը մի շարք բարձունքներով հասնում էր Գայլի Դրունք Լեռնանցքը և այնտեղից հյուսիսարևմտյան ուղղությամբ Լոքի և Օսինովայա լեռնագագաթներով ու Լոքի լեռնանցքով հասնում մինչև համապատասխան բարձունքին:

Նշված սահմանագծի հիման վրա Սադախլո, Գյուլբեգ, Խոժոռնի, Խոխմելի, Օփրեթի և Ձանդար գյուղերը իրենց բաժնեհողերով պետք է մնային Վրաստանի Բորչալու գավառի կազմում, իսկ Բերդաձոր, Չանախչի, Աղքյորփի գյուղերը՝ Հայկական ԽՍՀ Լոռի-Փամբակի գավառի ենթակայության տակ: Դրա հետ մեկտեղ ընդգծվում էր, որ եթե վերոնշյալ գյուղերի բաժնեհողերի սահմանները չհամընկնեն սահմանագծման հետ, ապա, անկասկած, առավելությունը պետք է տրվեր բաժնեհողերին սահմաններին, ըստ որի՝ տեղում պետք է իրագործվեին սահմանների համապատասխան փոփոխություններ: Իսկ ինչ վերաբերում էր Օփրեթի և Ձիլիսա գյուղերի միջև Շուլավեր-չայի աջ ափին գտնվող հողավեճին, հրահանգվեց շուռդարձի միջոցով առաջին գյուղին հատկացնել համարժեք տեղամաս Չանախչի գյուղի հողերի հաշվին կամ այլ ձևով, ինչը տեղանքում հետազոտման արդյունքում առավել նպատակահարմար կգտնվեր: Նշված համաձայնագրի ցանկացած փոփոխությունների մասին, որոնք կարող էին բացահայտվել հանձնաժողովի աշխատանքի պարագայում և կհամարվեին անհրաժեշտ ու նպատակահարմար, պետք է զեկուցվեր Անդրկենտգործկոմի հանձնաժողովին, որն անհրաժեշտության դեպքում պետք է մեկներ նշված վայրը[15]:

Հիմնական վեճը Լոռի-Փամբակ-Բորչալուի շուրջն էր՝ տնտեսական-վարչական սահմանի հաստատման և դրա հետ կապված սահմանամերձ շրջանների բնակավայրերի միջև վիճելի հարցերի, ինչպես նաև Լենինական-Ախալքալաքի գավառների միջև անցկացված վարչատնտեսական սահմանի արձանագրության հաստատման հետ:

1928 թ. օգոստոսի 15-ին Անդրկենտգործկոմի նախագահության նիստում Ս. Կասյանի, Ի. Օրախելաշվիլու, Թաղիևի և այլոց մասնակցությամբ լսվում է Անդրֆեդերացիայի տարբեր սահմանամերձ շրջանների միջև հողային-անտառային վեճերի մասին հարցը: Այդ կապակցությամբ որոշվում է ի գիտություն ընդունել Ս. Կասյանի հաղորդումը և հանձնարարել Անդրերկրկոմիտեի հանձնաժողովին ի դեմս Ս. Տեր-Գաբրիելյանի, Քարթվելաշվիլու և Մուսաբեկովի՝ եռօրյա ժամկետում կարգավորել հողային, հողահանդակային, ջրային և անտառային վեճերը Անդրֆեդերացիայի տարբեր սահմանակից շրջանների միջև: Փաստվում է նաև Հայաստանի և Վրաստանի միջև առկա վիճելի երեք տեղամասի հարցը՝ 21.600 դեսյատին մակերեսով, որոնցից մեկը փետրվարի 29-ին ներառվում է ՀԽՍՀ կազմում: Սույն հարցերն իրենց արտացոլանքը գտան նաև Անդրերկրկոմի քարտուղարության բյուրոյի 1928 թ. օգոստոսի 16-ի նիստում, որի կողմից պաշտոնագրեր ուղարկվեցին Ս. Տեր-Գաբրիելյանին, Քարտվելաշվիլուն և Մուսաբեկովին[16]:

1929 թ. փետրվարի 2-ին Անդրֆեդերացիայի հանրապետությունների միջև հողային-անտառային վեճերի լուծման հանձնաժողովի (Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի ժողկոմխորհների նախագահներ Մուսաբեկով, Մախարաձե, Տեր-Գաբրիելյան, Անդրկենտգործկոմի քարտուղար Շահվերդյան և Անդրերկրկոմի քարտուղար Օրախելաշվիլի) նիստում լսվում է սահմանագծի ամբողջ երկայնքով Լոռի-Փամբակ և Բորչալու գավառների միջև վարչատնտեսական սահմանի հաստատմանն առնչվող հարցը: Ըստ այդմ կայացվում է որոշում,

1) հաստատել հողժողկոմներ Երգնկյանի և Զուղելու միջև 1920 թ. օգոստոսի 10-ին ձեռք բերված համաձայնությունը՝ հատուկ հսկողություն սահմանելով ՀԽՍՀ տարածքում գտնվող ջրապաշտպան նշանակություն ունեցող անտառների նկատմամբ.

2) հանձնարարել 1928 թ. օգոստոսի 10-ին ձեռք բերված համաձայնության հիման վրա լուծել բոլոր վիճելի հարցերը և մանրամասն նկարագրել ամբողջ սահմանագիծը, որից հետո այն ներկայացնել Մուսաբեկովի, Տեր-Գաբրիելյանի և Մախարաձեի մասնակցությամբ գործող հողհանձնաժողովի հաստատմանը[17]:

1929 թ. փետրվարի 9-ին Մ. Ցխակայայի նախագահությամբ Անդրկենտգործկոմի Փոքր նախագահության նիստում լսվում են Վորոնցովկայի տեղամասում, Լոռի-Փամբակ գավառում և Դիլիջանում տիրող վիճակի մասին Աղամալովի և Պրեոբրաժենսկու զեկույցները, որոնք ընդունվում են ի գիտություն, և Անդրկենտգործկոմի կազմբաժնին հանձնարարականներ են տրվում զեկուցողների հետ համատեղ դրանցում նշված թերությունների վերացման համար ձեռնարկել համապատասխան միջոցներ[18]:

1929 թ. փետրվարի 18-ին Անդրկենտգործկոմի նիստում Ցխակայայի նախագահությամբ լսվում է Լոռի-Փամբակ և Բորչալու գավառների միջև վարչատնտեսական սահմանի հաստատման հարցը և որոշվում Երգնկյանի և Զուղելու կողմից 1928 թ. օգոստոսի 10-ին ձեռքբերված համաձայնությունը հաստատել՝ անտառները թողնելով ՀԽՍՀ կազմում: Զուղելուն և Երգնկյանին հանձնարարվում է բոլոր վիճարկելի հարցերը վճռել 1928 թ. օգոստոսի 10-ի համաձայնագրի հիման վրա և մանրամասն նկարագրել ամբողջ սահմանագիծը, հաստատագրելով, որ ընդունված որոշումը հենվում է տեղանքի մանրազնին հետազոտության և թերությունների բացահայտման վրա, որոնք խոչընդոտել են հողային վեճերի լուծմանը՝ այդ մասին կայացնելով միաձայն որոշում լիազորված շահագրգիռ անձերի կողմից: Որոշվում է, որ փետրվարի 18-ի վճիռը լինի վերջնական՝ այն իրագործելով ոչ ուշ, քան մինչև 1929 թ. աշունը, գործկոմներին պարտավորեցնելով բնակչությանը լայնորեն իրազեկել այդ մասին, իսկ խախտման դեպքում ենթարկել քրեական և վարչական պատասխանատվության:

Անդրկենտգործկոմին առընթեր հողային և անտառային վեճերի լուծման հանձնաժողովից պահանջվում է ամենայն աջակցություն ցուցաբերել Անդրկենտգործկոմի նախագահության՝ 1929 թ. փետրվարի 18-ի որոշման իրագործման հարցում: Հաստատ-

վում էր, որ ընդունված որոշումների մասին ոչ մի հայտարարություն հարցի վերանայման կամ նոր քննարկման մասին չի կարող ընդունվել և քննարկվել: Անդրկենտգործկոմի 1929 թ. փետրվարի 2-ի նիստում հողային վեճերի լուծման անդամներ Մուսաբեկովի, Տեր-Գաբրիելյանի և Մախարաձեի կողմից ստորագրվում է արձանագրություն: Ըստ ընդունված որոշման՝ Լենինականի (Գյումրիի) շրջանի Դարաքեյ գյուղին 80 դեսյատին հողատարածքի միացման խնդրանքը մերժվում է՝ հիմք ընդունելով 1927 թ. օգոստոսի 13-ի համաձայնության ակտը ՀԽՍՀ Լենինականի շրջանի և ՎԽՍՀ Ախալքալաքի գավառների միջև վարչատնտեսական սահմանի անցկացման վերաբերյալ[19]: 1929 թ. ապրիլին ՀԽՍՀ կենտգործկոմը փետրվարի 18-ի որոշումը կենսագործելու մասին շրջաբերական է արձակում, որի կիրարկումը տեղերում դրվում է Անդրկենտգործկոմին առընթեր հողային ու անտառային վեճերը քննող հանձնաժողովի վրա, որն այդ աշխատանքը պետք է ավարտեր 1929 թ. աշնանից ոչ ուշ: Դրանով Կենտգործկոմի նախագահը տեղեկացնում է Լենինականի, Լոռի-Փամբակի, Դիլիջանի, Նոր Բայազետի և Զանգեզուրի գավառական գործադիր կոմիտեներին, որ վերոհիշյալ գավգործկոմների և Անդրկովկասի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության (ԱԽՖՍՀ) կազմում ընդգրկված հանրապետությունների սամանամերձ գավգործկոմներին դեռևս բզկտող հողային ու անտառային վեճերի լուծումները համարվում են վերջնական: Այդ պատճառով աննպատակահարմար էին գտնվում Անդրկենտգործկոմին առընթեր հանձնաժողովի որոշումների վերանայումը կամ արդեն լուծված վեճերը նորից քննության առնելու վերաբերյալ դիմումների դիտարկումը[20]:

1929 թ. մայիսի 28-ին Լոռի-Փամբակ շրջանի Վորոնցովկայի գործկոմի նախագահի տեղակալ Սարատիկյանը Հայաստանի և Վրաստանի հողժողկոմներին հասցեագրած գրությամբ տեղեկացնում էր, որ Վորոնցովկայի տեղական գործկոմի հաղորդմամբ Վրաստանի Բանկոոպը առանց իրենց թույլտվության կտրատել է Շահնազար գյուղի ընկերության հողատարածքը 1520 սաժեն լայնությամբ և անցկացրել է ակոս: Այդպիսի վիճակը ոչ նորմալ համարելով, խնդրվում էր միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումները վերացնելու[21]: 1929 թ. հունիսի 8-ին Երզնկյանը և հողային վարչության պետ Սարատիկյանը ՀԽՍՀ Կենտգործկոմին և Վորոնցովկայի շրջգործկոմին ուղղված պաշտոնագրում խնդրում են ներկայացնել Վորոնցովկայի շրջգործկոմի գրությունը Շահնազար գյուղի հողերի սահմանը Թիֆլիսի Բանկոոպի կողմից խախտելու մասին, պահանջելով Անդրկենտգործկոմի հանձնաժողովի ու նրա երկրաչափի միջոցով տեղում ճշգրտել անօրինական սահմանը Շահնազար գյուղի համար[22]:

1929 թ. հուլիսի 22-ին տեղի է ունենում Անդրկենտգործկոմի նախագահության նիստը, որում քննարկվում է Փոքր նախագահության կողմից օրակարգ մտցված Բորչալուի և Լոռի-Փամբակի հողային և անտառային վեճերի հարցը[23] և որոշվում է.

1) հաստատագրել, որ ՀԽՍՀ սահմաններում և Լոք-Լալվար լեռնաշղթայի հյուսիսային լանջին գտնվող անտառները, և մասնավորապես գետերի ակունքները՝ աղբյուրներն ունեն հատուկ նշանակություն ներքին Բորչալուի գյուղատնտեսության զարգացման համար, և մոտ ապագայում ճիշտ անտառային տնտեսության կազմակերպմամբ այդ խոչընդոտները կվերացվեն և օրինակելի ձևով կբարեկարգվեն.

2) անտառների պաշտպանության նպատակներով անհրաժեշտ համարել Ջիլիսա գյուղի բնակիչների վերաբնակեցումը Չանախչի գյուղում.

3) Օփրեթի գյուղին իրավունք վերապահել վարձակալման ձևով օգտվել Շուլավեր-չայ գետի աջ ափի հողերից.

4) նկատի ունենալ, որ «Գելիկ թիվ 1» տեղամասը 158 դեսյատին տարածքով գտնվում է Բորչալուի տեղամասային գործկոմի սովխոզի օգտագործման ներքո, այն թողնել ՎՍԽՀ սահմաններում.

5) Շահնազար գյուղի կողմից վիճարկվող 580,80 դեսյատին տարածքով թիվ 2 տեղամասը թողնել Վրացական ԽՍՀ սահմաններում.

6) Սարիար և Սաաթի գյուղերի միջև վիճելի համարվող 63,84 դեսյատին տարածքով թիվ 3 տեղամասը թողնել Հայկական ԽՍՀ կազմում.

7) Օփրեթի և Չանախչի գյուղերի միջև վիճարկելի 633,60 և 102,72 դեսյատին տարածքով թիվ 4 և 5 հողամասերը թողնել ՎԽՍՀ կազմում.

8) Վարդաձոր և Սադախլո գյուղերի միջև վիճարկելի 6,48 դեսյատին տարածքով թիվ 7 տեղամասը թողնել ՀԽՍՀ կազմում[24]: Խնդիր է դրվում սահմանը հաստատել Լեգլի-դաղից մինչև Պոլութի-Բաշի լեռնագագաթի դամբարանը՝ Փամբակի շրջանում: Այդ խնդրի լուծման նպատակով Փոքր նախագահության առաջարկով Անդրկենտգործկոմի հողային հանձնաժողովում ընդգրկվում են ՀԽՍՀ-ից Երգնկյանը և Մամիկոնյանը, ՎԽՍՀ-ից՝ Զուղելին և Վ. Վաշակիձեն, Ադրբեջանական ԽՍՀ-ից՝ Միր Զաֆար Բաղիրովը և Մ. Շամսադինսկին[25]:

Ուշագրավ է ՀՀ հողբաժնի կազմբաժնի վարիչ Գ. Հովհաննիսյանի գրությունը, որտեղ նշելով, որ վերադարձվում է 1930 թ. հունիսի 20-ի գրությունը իր բոլոր նյութերով հանդերձ՝ ներկայացվում էր Կենտգործկոմի մեկնակետը, որ աշխատանքները լրիվ կազմով կատարված չեն, որ անհրաժեշտ է ավարտել ՀԽՍՀ-ի գոնե փաստական և լրիվ սահմանը 10 վերստանոց քարտեզի վրա, ուղղել քարտեզն ըստ Անդրկենտգործկոմի որոշման, որով Չանախչի, Բարդաձոր և Աղբյորփի գյուղերը հանձնվում էին ՀԽՍՀ-ին[26]:

1932 թ. ապրիլի 11-ին Անդրկենտգործկոմի Փոքր նախագահությունը քննարկում է թիվ 2 տեղամասին վերաբերող Բորչալուի և Լոռի-Փամբակի գավառների միջև հողային և անտառային վեճերին առնչվող Անդրկենտգործկոմի նախագահության՝ 1929 թ. սեպտեմբերի 2-ի որոշումը՝ փաստելով, որ այն չի կատարվել, և ըստ այդմ ՀՍՀ Կենտգործկոմին հանձնարարվում է անհապաղ միջոցներ ձեռնարկել այն իրականացնելու համար[27]:

1932 թ. մայիսի 17-ին Անդրկենտգործկոմի Փոքր նախագահության որոշումը դարձյալ վերաբերում էր Վրաստանի և Հայաստանի միջև սահմանների ճշգրտմանը: Միաժամանակ լսվում է Անդրկենտգործկոմի հողհանձնաժողովի նախագահի 1933 թ. մայիսի 4-ի զեկույցը, որը վերաբերում էր Բորչալուի և Ղարաքիլիսայի շրջանների միջև հողօգտագործական սահմանների ճշգրտմանը, ներկայացրած առաջարկին հավանություն տալուն և վերջնական խմբագրմանը՝ հանձնարարելով դա կատարել համապատասխան հանձնաժողովին, որի կազմում ընդգրկվել էին Թոդրիան, Դողաթովը, Բունիաթ-զադեն[28]:

1932 թ. հունիսի 5-ին Հայկենտգործկոմին ՀՍՀ հողժողկոմատի տեղակալ Ն. Ադոյանը Խորհրդային Վրաստանի Բորչալուի նախկին գավառի և ՀԽՍՀ նախկին Լոռու գավառի երկու հողամասերի հետ կապված վեճին վերաբերող գրությունում հայտնում էր, որ այն հնարավոր կլինի լուծել միայն այն դեպքում, երբ Անդրկենտգործկոմից ստանան իսկական պլանշետներ, որի համար առաջարկվում է միջնորդություն հարուցել Կենտգործկոմի առջև[29]:

1933 թ. փետրվարի 27-ին ՀԽՍՀ ժողկոմխորհը քննարկում է Ղարաքիլիսայի անտառտնտեսության խոտհարքներն Աղբյորփիի, Օփրեթի, Չանախչիի, Խոխմելնի և Բրդաձորի գյուղերի բնակիչներին տրամադրելու մասին Ծովյանի զեկուցումը, որի հիման վրա սահմանվում է, որ ՀԽՍՀ անտառներին սահմանամերձ Վրաստանի և Ադրբեջանի գյուղերը խոտհարքներից կարող են օգտվել նույն կարգով, ինչպես ՀԽՍՀ տարածքում գտնվող գյուղերը[30]:

1933 թ. մարտի 20-ին ՀԽՍՀ Կենտգործկոմի նախագահ Անանյանին ուղղված պաշտոնագրում Անդրկենտգործկոմի նախագահի պաշտոնակատար Տերեղուլովը նշում էր, որ Վրացական և Հայկական ԽՍՀ-ների միջև վարչատնտեսական սահմանի հաստատմամբ Բորչալուի շրջանի տարածքի մի մասն անցել է Հայաստանին: Միաժամանակ հայտնվում էր, որ այդպիսի վիճակը Աղբյորփի, Խոխմելի, Բրդաձոր և Օփ-

րեթ գյուղերի համար ստեղծել է դժվարություններ և խոչընդոտներ խոտհարքներից, ՀԽՍՀ-ին անցած տարածքի անտառային մարգագետիններից, խոտհարքներից և վարելահողերից օգտվելու հարցում՝ տեղեկացնելով, որ նախորդ տարիներին նշված հողերից օգտվելը կարգավորվել է ՀԽՍՀ անտառային վարչակարգով: Դրանում տեղեկացվում էր Անդրհողժողկոմատի մարտի 11-ի հեռագրի մասին, որը ուղարկվել էր հայկական կողմին՝ խնդրանքով նշված տեղամասերը՝ Վանքի-Թալա և այլ տեղամասերը թողնել Բորչալուի բնակչության օգտագործման ներքո: Սույն գրությունում ընդգծվում էր, որ հարցի հետագա հանգուցալուծումը հանձնվել է Անդրկենտգործկոմի հայեցողությանը, մինչ այդ խնդրելով նշված տեղամասերը թողնել թե՞ Բորչալուի շրջանի և թե՞ ՀԽՍՀ անտառտնտեսության օգտագործման ներքո[31]: 1933 թ. մարտի 26-ին ՀԽՍՀ Կենտգործկոմը լսում է ՀԽՍՀ հողժողկոմի հաղորդումը Վանքի-Թալայի և այլ բացատների վարելահողերից օգտվելու մասին, նշելով, որ ԱԽՖՍՀ ժողկոմատի կողմից միջնորդվել է Անտառժողկոմատի առջև՝ թույլատրել Բորչալուի շրջանի կոլտնտեսություններին մինչև հարուցված խնդրի վերջնալուծումը օգտվել Վանքի-Թալա և մյուս բացատների վարելահողերից[32]:

1933 թ. մայիսի 15-ին Անդրկենտգործկոմի նախագահը Անդրհողժողկոմատին ներկայացրած զեկուցագրում հայտնում էր, որ մայիսի 4-ի որոշմամբ կազմվել է հանձնաժողով Բորչալուի և Ալավերդու շրջանների միջև հողօգտագործման և վարչական ենթակայության հարցերի կարգավորման նպատակով: Տեղեկացվում է այդ նպատակով Անդրհողժողկոմատի կոլեգիայի անդամ Ղահրամանովի գլխավորությամբ և Վրաստանի ու Ադրբեջանի հողժողկոմատների, Բորչալուի, Ալավերդու շրջանների և Սադախլոյի ներկայացուցիչների մասնակցությամբ կազմված հանձնաժողովի մասին, որը մայիսի 11-ին ձեռնամուխ է լինում տեղում ծագած խնդրի լուծմանը[33]: Արդյունքում պարզվում է, որ ՀԽՍՀ բնակիչների հարուցած վեճը, կապված Սադախլոյի շուրջ գտնվող գյուղերի հողերի զավթման հետ, չի համապատասխանում իրականությանը, որ փաստացի հողօգտագործումը Սադախլո գյուղում իրագործվում է ըստ 1929 թ. սեպտեմբերի 2-ի որոշման: Անդրկենտգործկոմի հանձնաժողովը գտնում է, որ վեճի մասին հայտարարությունը ՀԽՍՀ քաղաքացիների կողմից արդար չէ, և այդ մասով հարցը սպառված է՝ ասվածին կցելով հանձնաժողովի 1933 թ. մայիսի 11-ի արձանագրությունը: Հանձնաժողովը եզրահանգում է, որ վարչական ենթարկվածության տեսանկյունից Չանախչի, Աղքորփի և Բրդաձոր գյուղերը պատկանում են Բորչալուի գավառին: Հանձնաժողովը հայտնում էր, որ 1929 թ. սեպտեմբերի 2-ին Անդրկենտգործկոմի կողմից՝ ըստ Վրաստանի և Հայաստանի միջև հաստատված սահմանի, նշված գյուղերը անցել են Հայաստանին: Արձանագրվում էր, որ, մինչև 1929 թ. սեպտեմբերի 2-ի սահմանի հաստատագրումը, այդ գյուղերը վարչական առումով ենթարկվում են Վրացական ԽՍՀ-ին և օգտվում տեղական մարգագետիններից, ինչպես խոտհարքներից: Եզրահանգման մեջ սակայն նշվել էր, որ տնտեսապես Աղքորփի, Չանախչի և Բրդաձոր գյուղերի բնապատմական պայմանները պարտադրում են շաղկապվել Բորչալուի գավառի հետ: Խնդիրը ներկայացնելիս Անդրկենտգործկոմի հողհանձնաժողովը հանգել էր այն հետևության, որ նշված գյուղերի հետագոտման ժամանակ իբր վերջիններիս բնակիչները հայտարարել են վարչական կարգով Բորչալուի շրջանին ենթարկվելու իրենց ցանկության մասին, չնայած բնակչության կազմը հայկական էր: Ըստ Անդրկենտգործկոմի 1929 թ. սեպտեմբերի 2-ի որոշման՝ անտառին տալով ջրաբաժանման հարցը կարգավորող բացառիկ պաշտպանական բնույթ՝ դրա հիման վրա վերջինս տրվում է Հայաստանին՝ դնելով այն Ղարաքիլիսայի անտառտնտեսության օգտագործման ներքո: Ընդգծվում էր, որ անտառային հովիտները նախկինում եղել են մերձակա վրացական գյուղերի օգտագործման ներքո՝ հանդիսանալով նրանց մատակարարման միակ աղբյուրը և ֆերմայի կերակրողը, որ դրանից նշված գյուղերը օգտվել են իրապես սահմանագիծը անցկացնելիս՝ վարձակալության համար դեռևս 1924 թվականից վճարելով ՀԽՍՀ անտառտնտեսությանը, իսկ

վերջին շրջանում իբր թե Ղարաքիլիսայի անտառտնտեսության կողմից հարուցվել են խոչընդոտներ և արգելքներ այդ գյուղերի առաջ անտառային բացատներից օգտվելու հարցում՝ պահանջելով եղջյուրավոր անասունները դուրս բերել ծմեռանոցներից՝ անգամ անտառային հեծելապահակների միջոցով դիմելով զինված ուժի: Հետևապես գտնելով, որ Ղարաքիլիսայի անտառտնտեսության կողմից այդ բնակիչներին խոտհարքային հանդակներից զրկելը կհանգեցնի անասունների ոչնչացմանը, ինչպես նաև նկատի ունենալով տնտեսական ու բնական-պատմական պայմանները և գյուղացիների ցանկությունը՝ հողհանձնաժողովը առավել նպատակահարմար է գտնում նշված գյուղերի նկատմամբ վարչական ղեկավարությունը թողնել Բորչալուի շրջանին: Ծագող վեճերի կանխարգելման նպատակով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ փաստական հողօգտագործումը գտնվում է Հայաստանի տարածքում՝ հանձնաժողովը անհրաժեշտ էր համարում միջհանրապետական սահմանը փոփոխել այնպես, որ Չանախչի, Աղքորփի և Բրդաձոր գյուղերի կողմից փաստական հողօգտագործումը անցնի Վրաստանին, իսկ ամեն տարի անտառային հողահանդակների շուրջ ծագող վեճերի կանխարգելման համար անհրաժեշտ է համարվում դրանք մերձակա գյուղերին տալ երկարաժամկետ վարձակալական հիմունքներով[34]:

1933 թ. հունիսի 26-ին Անդրկենտգործկոմի հողհանձնաժողովը լսում է Բորչալուի և Լոռիի շրջանների միջև հողօգտագործման սահմանների ճշգրտման ու հողահանդակների վարչական ենթակայության հարցը: Ըստ այդմ՝ հրահանգվում է որպես հիմք նկատի ունենալ Անդրկենտգործկոմի հողհանձնաժողովի 1933 թ. մայիսի 7-ի որոշումը Վրաստանի և Հայաստանի միջև գոյություն ունեցող հանրապետական սահմանի վերանայման մասին, որով Չանախչի, Աղքորփի և Բրդաձոր գյուղերը պետք է դուրս բերվեին Հայկական ԽՍՀ-ի կազմից և հանձնվեին Վրացական ԽՍՀ-ի տնօրինությանը՝ ընդունված վճռի մասին անհրաժեշտաբար տեղեկացնելով համապատասխան հանրապետությունների ԿԿ-ների եզրահանգմանը[35]:

Անդրկենտգործկոմի 1933 թ. հունիսի 17-ի արձանագրության քաղվածքից տեղեկանում ենք Բորչալուի և Ղարաքիլիսայի շրջանների վարչատնտեսական հարցերի ճշգրտման մասին, որի հիմքում ընկած էր Անդրկենտգործկոմի 1932 թ. մայիսի 4-ի որոշումը: Հունիսի 17-ի որոշումով հանձնաժողովի կողմից անտառային բացատների մասին Անդրկենտգործկոմի որոշման վերջնական խմբագրումը հանձնարարվում է Թոդրիայից, Դողաթովից և Բունիաթ-զադեից կազմված Անդրկենտգործկոմի հանձնաժողովին[36]:

1933 թ. հուլիսի 19-ին հողժողկոմ Ա. Անանյանը և հողվարչության պետ Ա. Սարաֆյանը ՀԽՍՀ Կենտգործկոմ են ներկայացնում պաշտոնագիր, անդրադառնալով Անդրկենտգործկոմի Փոքր նախագահության հունիսի 17-ի նիստի որոշումներին՝ կապված Բորչալուի և Ալավերդու շրջանների միջև եղած սահմանազատիչ փոփոխությունների հետ: Հայտնվում էր, որ իրենք համաձայն են Անդրկենտգործկոմի հանձնաժողովի եզրակացության հետ՝ Չանախչի և Բրդաձոր գյուղերը Խորհրդային Վրաստանի վարչական ղեկավարության տակ թողնելու վերաբերյալ միայն այն պայմանով, նոր սահմանների գծումը կատարելիս չխախտվի անտառտնտեսության միասնությունը, չտուժեն այդ տնտեսության շահերը[37]:

1933 թ. օգոստոսի 3-ին ԱԽՍՖՀ-ն Կենտգործկոմին, Ալավերդու շրջգործկոմին է ուղարկվում ՀԽՍՀ Կենտգործկոմի նախագահության նիստի արձանագրությունը՝ կապված Ալավերդու և Բորչալուի միջև ընկած գյուղերի հողօգտագործական-վարչական սահմանների ճշգրտման մասին ԿԳԿ քարտուղարի զեկուցումը, որը որոշել էր.

1) հավանություն տալ Անդրկենտգործկոմի ընտրած հատուկ հանձնաժողովի եզրակացությանը և Վրաստանի տարածքին կցվելիք Չանախչի, Աղքորփի և Բրդաձոր գյուղերի փաստական օգտագործման ենթակա հողակտորները տրամադրել այդ գյուղերին՝ երկարամյա վարձակալության հիմունքներով.

2) ՀԽՍՀ անտառժողկոմատին լիազորել տեղում մասնակցելու սահմանագծման աշխատանքներին[38]:

1934 թ. փետրվարի 13-ին Անդրկենտգործկոմի փոքր նախագահության նիստը դարձյալ լսում է Բորչալուի գավառի և Ալավերդու շրջանների միջև վարչատարածքային սահմանազատման մասին հարցը և որոշում.

1) հաստատել Բորչալուի և Ալավերդու միջև վարչատարածքային սահմանազատման մասին հանձնաժողովի շահագրգիռ կողմերի հավանությանը արժանացած առաջարկը.

2) ըստ նախագահության ցուցումների՝ անհրաժեշտ համարել Վրաստանի կազմում ներառել Աղքյորփի, Բրդաձոր և Չանախչի գյուղերը՝ առկա վարչատարածքային սահմաններում, Բորչալուի և Ալավերդու շրջանների միջև փոփոխել սահմանագիծը, նշված գյուղերի բնակիչներին իրավունք վերապահել հետայսու ևս վարձակալական երկարաժամկետ հիմունքներով օգտվել Հայկական ԽՍՀ տարածքում գտնվող անտառային զանգվածի նկատմամբ արտոնություններից[39]:

Վրացական ԽՍՀ-ը հողային հարցում երբեք զիջողականության պատրաստակամություն չէր դրսևորում, և ցանկացած առիթ օգտագործում էր վարչատարածքային սահմանաբաժանման խնդրում շահող դուրս գալու համար, որին ՀԽՍՀ իշխանություններն իրենց հերթին ընդդիմանում էին՝ համոզված իրենց իրավացիության մեջ: Դիտարժան է հողային վեճի կապակցությամբ Վրաստանի Կենտգործկոմի նախագահության 1934 թ. մարտի 2-ի նիստը, որում լսվում է Վրաստանի Բորչալուի գավառի և ՀԽՍՀ Ալավերդու շրջանի միջև վարչատարածքային սահմանազատման հարցը: Ընդունված որոշման մեջ հիմք ընդունելով Անդրկենտգործկոմի նախագահության 1934 թ. փետրվարի 13-ի որոշումը որոշվում է Վրացական ԽՍՀ-ին տրված ՀԽՍՀ-ի Աղքյորփի, Բերդաձոր և Չանախչի գյուղերը միացնել Բորչալուի շրջանին և վերաբաշխել Օփրեթի և Խոժոռնիի գյուղխորհուրդների միջև այնպես, որ Չանախչի և Աղքյորփի գյուղերն ընդգրկվեն Օփրեթի գյուղխորհրդի, իսկ Բերդաձորը՝ Խոժոռնիի գյուղխորհրդի կազմում[40]:

1934 թ. օգոստոսի 14-ին Անդրկենտգործկոմի հանձնաժողովը Չանախչի գյուղում Շահվերդովի նախագահությամբ և Անդրհողժողկոմատի ներկայացուցիչներ Ղուկասովը, ՀԽՍՀ և Վրաստանի հողժողկոմներ Լ. Հակոբջանյանը և Պ. Մետրևելին, Բորչալուի շրջանային գործկոմի Յուսուբովը, Ալավերդու գործկոմից՝ Ղազարյանը, Անտառժողկոմատի ՀԽՍՀ լիազոր-ներկայացուցիչ Ծովինյանը, Սադախլոյի անտառտնտեսությունից Մարտիրոսյանը, Չանախչի գյուղի Մյասնիկովի անվան կոլտնտեսությունից Ս. Միսկարյանը, Անդրկենտգործկոմի 1934 թ. փետրվարի 13-ի որոշման հիման վրա տեղանքում հաստատում են Չանախչի և Սադախլոյի անտառտնտեսության միջև փաստացի հողօգտագործման սահմանը, որը միաժամանակ դառնում էր սահման Հայկական ԽՍՀ Ալավերդու շրջանի և Վրացական ԽՍՀ Բորչալուի գավառի միջև: Այնուհետև Անդրկենտգործկոմի այդ նույն որոշման հիման վրա անտառային բացատների երկարաժամկետ օտագործման հանձնման համար, նկատի ունենալով Չանախչիի կոլտնտեսության և Սադախլոյի անտառտնտեսության կարիքը, որոշվում է Ձիթհանք, Գոլի--Թալա բնակավայրերը թողնել անտառտնտեսությանը, իսկ Շահմուրադի-Փգեր, Վանքիթամ անտառային բացատները՝ ընդհանուր 105 հա մակերեսով՝ ամբողջությամբ հանձնել Չանախչիի Մյասնիկյանի անվան կոլտնտեսությանը՝ երկարաժամկետ անփոխհատույց օգտագործման[41]:

Հիմք ընդունելով Անդրկենտգործկոմի 1934 թ. սեպտեմբերի 7-ին ՀԽՍՀ Կենտգործկոմի ընդունած որոշումը՝ ընդգծվում էր, որ Անդրկենտգործկոմի 1934 թ. փետրվարի 13-ի որոշման հիման վրա հատուկ հանձնաժողովը օգոստոսի 16-ին Բորչալուի և Ալավերդու շրջանների միջև կրկին ճշգրտել է անտառի սահմանը Սադախլոյի շրջանում: Տեղեկացվում էր նաև, որ հանձնաժողովում Հայանտառշինի ներկայացու-

ցիչները բողոքարկել են դրա դեմ՝ ելնելով անտառի խորքերում գտնվող բացատները Բրդաձոր, Աղքյորտի և Չանախչի գյուղերին հատկացումից, ինչն ընդունվել էր՝ հաշվի առնելով իբր թե Անտառտնտեսության կողմից մթերումների ծախսման հանգամանքը: Հայտնվում էր Անտառժողկոմատի լիազորի խնդրանքի մասին, որ բոլոր շոշափված հարցերը հարկավոր է վճռել տեղում՝ փաստական սահմանազատման ժամանակ, որի մասին ՀԽՍՀ անտառժողկոմատի լիազոր ներկայացուցիչ Խաչատրյանը վերոնիշյալ դիմումագրում հայցում էր ՀԽՍՀ Կենտգործկոմի միջամտությունը[42]: Այդ կապակցությամբ Անդրանտառժողկոմատի Հայաստանի վարչությունը խնդիր էր դնում կրկին կապվել Մախարաձեի գլխավորած հողհանձնաժողովի հետ՝ ընդունված որոշման հետ առաջացած տարակարծությունները հարթելու համար[43]:

1934 թ. օգոստոսի 4-ին կրկին շոշափվում է Բորչալուի և Ալավերդու շրջանների վարչատարածքային սահմանազատման հարցը՝ կապված Անդրկենտգործկոմի նախագահության 1934 թ. փետրվարի 13-ի որոշման հետ, ըստ որի՝ Աղքյորտի, Բրդաձոր և Չանախչի գուղերը հանձնվում էին Բորչալուի շրջանին և բաշխվում Օփրեթի ու Խոգնավարի գյուղխորհուրդների միջև, որի արդյունքում Չանախչի և Աղքյորտի գյուղերը հանձնվում են Օփրեթի գյուղխորհրդին, իսկ Բրդաձորը՝ Խոգնավարի շրջանին, ինչի մասին տեղեկանում ենք Համավրացական Գործադիր կոմիտեի նախագահ Ֆ. Մախարաձեի գրությունից[44]:

1934 թ. օգոստոսի 10-ին Հողժողկոմին և Ալավերդու շրջգործկոմի նախագահին Կենտգործկոմի բաժնի վարիչ Հախումյանը տեղեկացնում էր Անդրկենտգործկոմի օգոստոսի 9-ի հեռագրային հաղորդագրության մասին, որ Բորչալուի և Ալավերդու շրջանների սահմանները ճշգրտելու համար Անդրկենտգործկոմում օգոստոսի 13-ին որոշվել է հատուկ հանձնաժողովի նշված վայրը մեկնելու մասին, որի համար Անդրկենտգործկոմը առաջարկել էր խնդրի լուծմանը ներգրավել Հողժողկոմատի և Ալավերդու շրջանի ՀԽՍՀ ներկայացուցիչներին[45]:

Անդրկենտգործկոմի հողհանձնաժողովի (նախագահությամբ Ա. Շահվերդյանի, անդամներ՝ Անդրհողժողկոմատից Գ. Ղուկասովը, ՀՍՀ հողժողկոմատից Հակոբջանյանը, Վրաստանի հողժողկոմատից՝ Մետրևելին, Բորչալուի շրջգործկոմից՝ Յուսուպովը, ՀԽՍՀ Անտառժողկոմատից Ծովինյանը, Սադախլոյից անտառագործ Մարտիրոսյանը և այլք) 1934 թ. օգոստոսի 15-ի արձանագրությունում կրկին փաստվում է Անդրկենտգործկոմի որոշմամբ Աղքյորտի գյուղը Բորչալուի գավառին հանձնելու մասին: 1934 թ. օգոստոսի 23-ին հողժողկոմ Վ. Մամիկոնյանը և հողշինբաժնի վարիչ Գ. Համբարձումյանը Հայկենտգործկոմին հայտնում են, որ Անդրկենտգործկոմը հանձնարարել է Ալավերդու շրջգործկոմի մասնակցությամբ տեղում ճշգրտել Բորչալուի և Ալավերդու շրջանների սահմանները[46]:

Իսկ արդեն ՀԽՍՀ Կենտգործկոմի նախագահ Ս. Մարտիրոսյանին հասցեագրված 1934 թ. օգոստոսի 31-ի պաշտոնական գրությունում Անդրկենտգործկոմի նախագահ Ֆ. Մախարաձեն հայտնում էր Բորչալուի և Ալավերդու շրջանների վարչատարածքային սահմանազատմանը վերաբերող Անդրկենտգործկոմի նախագահության 1934 թ. փետրվարի 13-ի որոշման մասին, որով իրավունք էր տրվել Բրդաձոր, Աղքյորտի և Չանախչի գյուղերի ՎԽՍՀ կազմում ընդգրկման և դրան հարող Հայաստանի տարածքում գտնվող անտառային բացատների հետագա օգտագործման վերաբերյալ: Նշվում էր, որ հակառակվելով այդ որոշմանը, Սադախլոյի անտառտնտեսությունը, որի տրամադրության տակ էին գտնվում դրանք, նշված գյուղերին խոչընդոտել էր խոտհունձ անել: Այսպիսով, դեռևս 1934 թ. փետրվարին հաստատված իրավունքը օգտվել բացատների խոտհունձից, հետագայում ամրապնդվել է միութենական օրենքով: Հայտնվում էր նաև, որ անտառտնտեսությունը իրականացնում է միանգամայն անօրինական գործողություններ՝ թույլ չտալով կոլտնտեսություններին օգտվել անտառային բացատներից, ավելացնելով, որ այդ մասին Անդրկենտգործկոմի քարտուղար Թոդ-

րիան հուլիսի 26-ին տեղեկացրել է ՀԽՍՀ Կենտգործկոմի քարտուղար Դաշտոյանին: Մախարաձեն խնդրում էր կարգադրել Անդրկենտգործկոմի հանձնաժողովի կողմից Սադախլոյի անտառտնտեսությանը հատկացված անտառային բացատում հնձված խոտը հանձնել այդ գյուղերին և պարզել օգտագործման կարգի հետ կապված խոչընդոտների հարցը[47]:

1935 թ. մարտի 19-ին տեղի է ունենում Անդրկենտգործկոմի Փոքր նախագահության նիստը, որը Անդրկենտգործկոմի քարտուղար Թոդրիայի նախագահությամբ լսում է Բորչալուի և Ալավերդու շրջանների միջև նոր սահմանների հաստատման Անդրկենտգործկոմի նախագահության հանձնաժողովի ակտերի հաստատման մասին հարցը: Բորչալուի և Ալավերդու շրջանների միջև սահմանագծի հաստատման և Չանաչի, Աղքորփի և Բրդաձոր գյուղերի անտառային բացատներից օտվելու մասին Ա. Շահվերդյանի գլխավորությամբ գործած Անդրկենտգործկոմի նախագահության հողհանձնաժողովի՝ 1934 թ. օգոստոսի 14-ի և 16-ի ակտերը որոշվում է հաստատել: Դրա հետ մեկտեղ ՀԽՍՀ կառավարությանը առաջարկվածը դյուրացնում էր Վրաստանի կազմում ընդգրկված վերոնշյալ գյուղերի կողմից Հայաստանին հարող տարածքում գտնվող անտառային բացատներից անխոչընդոտ օգտվելու կարգը[48]:

ՀԽՍՀ Կենտգործկոմի նախագահության կողմից 1937 թ. դեկտեմբերի 25-ին կայացրած որոշման առումով դիտարժան է Շ. Առուշանյանի զեկուցումը կապված հայ-վրացական 1934 թ. հուլիսի 19-ի համաձայնության հետ: Դրանից տեղեկանում ենք ՀԽՍՀ Ստեփանավանի շրջանի Շահնազար գյուղի և ՎԽՍՀ Բաշիկիչեթի շրջանի Կաշկաթալա գյուղի միջև «Կուլու-Թաշ» կոչվող հողամասի վիճարկման խնդրով Հայաստանի և Վրաստանի կենտգործկոմների համահավասար հիմունքներով Թիֆլիսում ստեղծված հանձնաժողովի ընդունած 1937 թ. նոյեմբերի 4-ին ակտի մասին: Դրանում հաստատվում էր, որ վիճելի հողամասը, ըստ Անդրկենտգործկոմի հողային հանձնաժողովի նախկինում կայացրած որոշման, գտնվում է Հայկական ԽՍՀ վարչական սահմաններում: Սակայն 1937 թ. նոյեմբերի 4-ի եզրահանգմամբ վճիռ է կայացվում փոխադարձ համաձայնությամբ Կուլու-Թաշի վիճելի հողամասը՝ 40-50 հեկտար տարածությամբ, թողնել Վրացական ԽՍՀ Բաշկիչեթի շրջանի Կաշկաթալա գյուղի օտգագործման ներքո: ՀԽՍՀ Կենտգործկոմի քարտուղարի պաշտոնակատարի հավաստմամբ՝ որոշվում է տնտեսական սահմանը Շահնազար և Կաշկաթալա գյուղերի միջև անցկացնել ըստ ներկայացրած հատակագծի գլխավոր ջրաբաժանով՝ չփոփոխելով պետական սահմանը[49]:

Կարելի է հանգել հետևության, որ խորհրդային իշխանությունները որոշակի կոշտ քայլեր ձեռնարկեցին անդրկովկասյան հանրապետությունների և մասնավորապես հայ-վրացական հողային-սահմանային տարակարծությունները հաղթահարելու և լարվածությունը վերացնելու համար, ինչը նրանց ինչ-որ տեղ «հաջողվեց»: Ուժեղ կենտրոնացված պետության համակարգն իր դերը խաղաց, սակայն ներքուստ իր մեջ պահպանեց ապագա լարվածության հիմքերը, ինչն ազգամիջյան փոխհարաբերություններում կարևոր հանգամանք էր և գործոն, որը բխում էր տարածաշրջանային շահերի զարգացման այդ պահին իշխող միտումներից:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 112, g. 8, գ. 96, թ. 6:
2. Նույն տեղում, ֆ. 123, g. 16, գ. 117, թ. 47 և 47 հակ.:
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում, ֆ. 112, g. 1, գ. 280, թ. 24 հակ.:
5. Նույն տեղում, g. 3, գ. 150, թ. 71 հակադ.:

6. Նույն տեղում, գ. 26, թ. 217:
7. Նույն տեղում, գ. 703, թ. 203:
8. Նույն տեղում, g. 1, գ. 280, թ. 24 հակ.:
9. Նույն տեղում, g. 3, գ. 568, թ. 32, 38, 40:
10. Տե՛ս նույն տեղում, թ. 67 (հրապարակվել է՝ «Заря Востока», Тифлис, 22 ноября, 1927 г., N 1582):
11. ՀԱԱ, ֆ. 113, g. 3,, 568, թ. 78, 80 հակ.:
12. Նույն տեղում, գ. 703, թ. 203, նույն տեղում, ֆ. 112, g. 2, գ. 1407, թ. 203:
13. Նույն տեղում, ֆ. 112, g. 5, գ. 70, թ. 11:
14. Նույն տեղում, g. 2, գ. 1407, թ. 66:
15. Նույն տեղում, ֆ. 123, g. 2, գ. 8, թ. 4-5:
16. Նույն տեղում, ֆ. 113, g. 3, գ. 703, թ. 134, 192, 194-195:
17. Տե՛ս նույն տեղում, թ. 190-191:
18. Նույն տեղում, ֆ. 212, g. 2, գ. 1407, թ. 102:
19. Նույն տեղում, թ. 174 հակ., նույն տեղում, գ. 1412, թ. 13 հակ.-14 հակ., նույն տեղում, ֆ. 113, g. 1, գ. 703, թ. 181:
20. Նույն տեղում, ֆ. 112, g. 1, գ. 267, թ. 90:
21. Նույն տեղում, g. 2, գ. 199, թ. 3:
22. Տե՛ս նույն տեղում, թ. 2:
23. Տե՛ս նույն տեղում, գ. 1412, թ. 22:
24. Տե՛ս նույն տեղում, գ. 199, թ. 13:
25. Նույն տեղում, գ. 1412, թ. 87:
26. Տե՛ս նույն տեղում, գ. 227, թ. 12:
27. Տե՛ս նույն տեղում, գ. 681, թ. 47, 54:
28. Տե՛ս նույն տեղում, գ. 232, թ. 20:
29. Նույն տեղում, գ. 681, թ. 46:
30. Տե՛ս նույն տեղում, թ. 34:
31. Տե՛ս նույն տեղում, թ. 43-43 հակ.:
32. Տե՛ս նույն տեղում, թ. 37-38:
33. Նույն տեղում, գ. 232, թ. 21:
34. Նույն տեղում, գ. 232, թ. 21-22, g. 1, գ. 681, թ. 29-30:
35. Նույն տեղում, g. 2, գ. 232, թ. 19:
36. Նույն տեղում, g. 1, գ. 681, թ. 37:
37. Նույն տեղում, g. 2, գ. 232, թ. 18:
38. Տե՛ս նույն տեղում, թ. 17:
39. Նույն տեղում, ֆ. 112, g. 1, գ. 681, թ. 28:
40. Տե՛ս Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Վրաստանիի սահմանային վիճելի հարցերը 1920-1930-ական թվականներին, կազմ. Ա. Բաղալյանը // «Բանբեր Հայաստանի արխիվների», 2018, թիվ 126, էջ 112:
41. ՀԱԱ, ֆ. 112, g. 1, գ. 681, թ. 3-5, 83-84:
42. Տե՛ս նույն տեղում, թ. 7-8:
43. Տե՛ս նույն տեղում, թ. 9:
44. Տե՛ս նույն տեղում, թ. 18:
45. Տե՛ս նույն տեղում, թ. 14-15:
46. Տե՛ս նույն տեղում, թ. 13:
47. Տե՛ս նույն տեղում, թ. 10:
48. Տե՛ս նույն տեղում, թ. 54, 85:
49. Նույն տեղում, ֆ. 112, g. 3, գ. 328, թ. 3:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստան-Վրաստան հարաբերությունները և հողային-տարածքային սահմանազատման հիմնահարցերը 1925-1936 թթ.

Վանիկ Վիրաբյան

1925-1937 թթ. սահմանագծին հայ-վրացական հարաբերությունները թևակոխեցին հանգուցալուծման նոր, ոչ պակաս դժվարին փուլ: Կարելի է հանգել հետևության, որ պատմական այս ժամանկահատվածում խորհրդային իշխանությունները որոշակի կոշտ քայլեր ձեռնարկեցին անդրկովկասյան հանրապետությունների, մասնավորապես հայ-վրացական հողային-տարածքային սահմանազատման տարաձայնությունները հաղթահարելու և լարվածությունը վերացնելու համար, ինչը նրանց ինչ-որ տեղ հաջողվեց: Ուժեղ կենտրոնացված պետության համակարգն իր դերը խաղաց, սակայն ներքուստ իր մեջ պահպանեց ապագա լարվածության հիմքերը, ինչն ազգամիջյան փոխհարաբերություններում կարևոր հանգամանք էր և գործոն, որը բխում էր տարածաշրջանային շահերի զարգացման այդ պահին իշխող միտումներից:

РЕЗЮМЕ

Отношения Армения-Грузия и вопросы о земельно-территориальном разграничении в 1925-1937 гг.

Ваник Вирабян

Ключевые слова: Армянская ССР, Грузинская ССР, Лори, Ахалкалак, Борчалы, разграничение, земельный участок, территориально-пограничные споры, граница, договор.

В 1925-1936 гг. армяно-грузинские отношения вступили в новую, не менее сложную, стадию. Можно прийти к выводу, что в данный исторический период советские власти предприняли ряд жестких мер для устранения напряженности и разногласий между закавказскими республиками, в частности в вопросе армяно-грузинского разграничения. И это им в некоторой степени удалось. Система сильного централизованного государства сыграла свою роль, однако внутри стран сохранилась напряженность, что стало важным обстоятельством и фактором в отношениях между двумя республиками. Все это исходило из господствующих тогда тенденций развития региональных интересов.

SUMMARY

Armenia-Georgia Relations and Problems of Land-Territorial Division in 1925-1937

Vanik Virabyan

Keywords: Armenian SSR, Georgian SSR, Lori, Akalkalak, Borchalu, demarcation, plot, territorial-bordering dissensions, boundary, agreement.

In 1925-1937 Armenian-Georgian relations entered a new, no less difficult stage of settlement. We can conclude that during this historical period, Soviet authorities took certain tough steps and somehow succeeded in overcoming land-territorial division disagreements and eliminating tension between the Transcaucasian Republics, in particular between Armenia and Georgia. The powerful centralized state system played its role, but inside it retained the basis for future tensions, which was an important factor in inter-ethnic relations deriving from the dominant trends in the development of regional interests.